ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

«ՄԵԾ ԼՈՔԴԱՈՒՆԻ» ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ԱՇԽՈՒԺԱՑՈ՞ՒՄ, ԹԵ՞Ղ ՆՈՐ ԱՆԿՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հայաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի և Էստոնիայի տնտեսությունների և, հատկապես, աշխատաշուկայի վրա նոր COVID-19 կորոնավիրուսային համավարակի ազդեցությունների համեմատական վերլուծությանը: Համավարակի տարածումը կանխելու համար աշխարհի շատ երկրներում սահմանվեցին պարտադիր կարանտին և սահմանափակումներ տնտեսական գործունեության որոշ տեսակների վրա, որի հետևանքով առողջապահական ճգնաժամն ուղեկցվեց տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմամբ, տնտեսության տարբեր ոլորտների նշանակալի կրճատմամբ, գործազուրկների թվաքանակի աճով: Այս ազդեցությունները մեղմելու համար երկրների կառավարությունները կյանքի կոչեցին կարանտինում և հիվանդության արձակուրդում գտնվող աշխատողներին, աշխատանքը կամ եկամուտը կորցրած անհատներին, բիզնեսին, տուժած ոլորտներին աջակցելու, արդյունավետ աշխատատեղերը պահպանելու տարատեսակ միջոցառումներ: Դրանք որոշակիորեն զսպեցին անկումը, նույնիսկ որոշակի աշխուժացում ապահովեցին, սակայն, ակնհայտ է, որ նախավարակային մակարդակին վերադառնալու համար տնտեսություններից կպահանջվի 2 և ավելի տարի, եթե իհարկե, համավարակի տարածման երկրորդ ալիքն ավելի «բարեհաճ գտնվի»:

Հիմնաբառեր. *«Մեծ լոքդաուն», COVID-19 համավարակ, ճգնաժամ, զբաղվածության անկում, տուժած ոլորտներ*

JEL: E24, J11

Ներածություն: COVID-19 կորոնավիրուսային համավարակի տարածումն աշխարհում հանգեցրեց առողջապահական ճգնաժամի, որն արագորեն զուգակցվեց սոցիալ-տնտեսական ճգնաժամով: Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատումներով՝ համավարակային ճգնաժամի պատճառով 2020-2021 թթ. համաշխարհային տնտեսության հանրագումարային կորուստը կկազմի շուրջ 12.5 տրիլիոն ԱՄՆ դոլար[1]: Ըստ նույն աղբյուրի՝ 2020 թ. համաշխարհային թողարկման ծավալը կնվազի 4.4%-ով, իսկ 2021 թ. տնտեսական աճը կկազմի 5.4%: Զարգացած տնտեսություններում կանխատեսվում է 5.8% անկում, զարգացող տնտեսություններում՝ 3.3% (եթե Չինաստանի տնտեսության 2020 և 2021 թթ. կանխատեսվող գումարային 10.1% տնտեսական աճի ազդեցությունը բացառենք, ապա զարգացող տնտեսություններում անկումը կկազմի 5.7%):

ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար ՀՀ Կառավարության կողմից հայտարարված արտակարգ դրության ու պարտադիր կարանտինի ընթացքում սահմանափակումներ և արգելքներ սահմանվեցին տնտեսական գործունեության առանձին տեսակների վրա: Տնտեսության այս լոքդաունի արդյունքում երկրի ՀՆԱ-ն կրճատվեց, գործազրկության մակարդակը և հարկադիր պարապուրդում գտնվողների թվաքանակն աճեց, կրճատվեցին տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը: Ստեղծված իրավիճակում ՀՀ Կառավարությունն իրականացրեց համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումներ: Սույն հոդվածի նպատակն է վերլուծել COVID-19 համավարակի ազդեցությունները ՀՀ աշխատաշուկայի վրա և դրանք համեմատել Վրաստանի, Բելառուսի, Ուկրաինայի և Էստոնիայի աշխատաշուկայի ցուցանիշների հետ:

Գրականության ակնարկ: COVID-19 ճգնաժամի ի հայտ գալու պահից կարճ ժամանակ անց տնտեսագիտական հանրույթը հանդես եկավ տնտեսական շոկի և աշխատաշուկայի պարբերաշրջանի զարգացման հնարավոր սցենարների կանխատեսումներով: Ճգնաժամի հաղթահարման հնարավորությունների և ժամկետների շուրջ Բրուկինգսի ինստիտուտի «Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության» կենտրոնի վերլուծությունների[2], Conference Board ուղեղային կենտրոնի կողմից աշխարհի 600 գլխավոր գործադիր տնօրենների շրջանում իրականացված հարցումների[3], Համաշխարհային տնտեսական համաժողովի հետազոտությունների[4] արդյունքները հանգեցին հետևյալին.

– *ամենալավատեսական* սցենարի դեպքում պարբերաշրջանը կունենա «Z»-աձև տեսք, ըստ որի՝ լոքդաունի ընթացքում չարտադրված ՀՆԱ-ն պարզապես «հետաձգվել» է որոշակի ժամանակով, և համավարակի ռիսկը չեզոքանալուց հետո կվերականգնվի,

---

[1] Տե՛ս International Monetary Fund, World Economic Outlook: A Long and Difficult Ascent, October 2020:

[2] Տե՛ս **Sheiner L., Yilla K.,** The ABCs of the Post-COVID Economic Recovery, Hutchins Center on Fiscal and Monetary Policy, May 4, 2020:

[3] https://conference-board.org/topics/natural-disasters-pandemics/CEOs-around-the-Globe-Not-Optimistic-about-Speed-of-Recovery

[4] https://www.weforum.org/agenda/2020/09/covid19-recovery-shape-economy-ceo/

- *շատ լավատեսական* սցենարի դեպքում պարբերաշրջանը կունենա «***V***»-աձև տեսք, այսինքն՝ կտրուկ անկմանը կհաջորդի նույնօրինակ կտրուկ վերելքը,
- *որոշ չափով հոռետեսական* սպասումների համաձայն՝ այն կունենա «***U***»-աձև տեսք, ըստ որի՝ տնտեսությունը նախաճգնաժամային վիճակին վերադարձնելու համար տևական ժամանակ կպահանջվի,
- *հոռետեսական* սպասումների համաձայն՝ պարբերաշրջանը կունենա ***փչակաձև*** տեսք («Նայք» ապրանքանիշի տարբերանշանի տեսքը), այսինքն՝ եթե սահմանափակումները վերանան և տնտեսական ակտիվությունը բարձրանա, ապա տնտեսությունը կտրուկ կվերադառնա նախավարակային վիճակին, սակայն սպառողները, բիզնեսը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները դեռ կհապաղեն մեծացնել ծախսերը, և տնտեսությանը նախաճգնաժամային մակարդակին վերադարձնելու համար երկար ժամանակ կպահանջվի,
- *ծայրահեղ հոռետեսների* պնդմամբ՝ այն կունենա «***L***»-աձև տեսք, որն անորոշ է դարձնում անգամ առողջացման հեռանկարը,
- հնարավոր է նաև պարբերաշրջանի զարգացման «***W***»-աձև տեսքը, ըստ որի՝ առաջին աշխուժացումից հետո կսկսվի նոր ճգնաժամ, սակայն անհայտ է, թե ինչպիսին կլինի նոր աշխուժացումը: Անորոշության բարձր աստիճանը հստակ ելք մատնանշելու հնարավորություն դեռ չի ընձեռում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի՝ տնտեսական շոկի ազդեցությունների և հաղթահարման 2020 թ. մայիս ամսվա կանխատեսումների համաձայն՝ մեր կողմից համեմատվող երկրներում տնտեսական պարբերաշրջանը պետք է ունենար «V»-աձև տեսք, և բոլոր երկրներում 2021 թվականը պետք է լիներ կտրուկ վերելքի տարի: Ընդ որում, դիտարկվող երկրներից 2020 թ. ամենափոքր անկումը՝ 3.5%, կանխատեսվում էր Հայաստանում, իսկ ամենամեծը՝ Էստոնիայում՝ 6%: 2021 թ. Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում կանխատեսվում էր 5-5.5% աճ, Բելառուսում՝ 3.5%, իսկ Էստոնիայում՝ 7%[5]:

Հայտնի է, որ համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումները երկրներում կիրարկվելու են լավագույն դեպքում մինչև 2020 թ. ավարտը, որից հետո այս ուղղակի և անուղղակի գործիքների կարճաժամկետ աշխուժացում ապահովող ազդեցությունը կվերանա, և տնտեսությունները կբախվեն տնտեսական անկման երկրորդ ալիքի հետ: Այս համատեքստում, հատկանշական են 2020 թ. օգոստոսի 14-19 ընկած ժամանակահատվածում Ռոյթերս գործակալության կողմից տնտեսագետների շրջանում իրականացված հարցման արդյունքները,[6] որոնք հակասություն առաջացրեցին ՎԶԵԲ-ի 2020 թ. մայիս ամսվա կանխատեսումների հետ: Հարցվողների 85%-ի կարծիքով՝ տարեվերջին, երբ պետությունները կդադարեցնեն կարճաժամկետ աջակցության սխեմաների կիրառումը, «կինչի աշխատատեղերի կորստի երկրորդ ալիքի գալստյան մասին ազդարարող

[5] Տե՛ս EBRD Regional Prospects in the EBRD Regions Covid-19: Early Estimates of the Damage, uncertain prospects, September 2020:

[6] https://uk.reuters.com/article/uk-eurozone-economy-poll/euro-zone-economic-outlook-steady-but-job-recovery-at-high-risk-reuters-poll-idUKKCN25G005?il=0

կեսգիշերի զանգը, այդպիսով՝ Մոխրոտիկի հեքիաթը (կարճաժամկետ տնտեսական աշխուժացումը) կավարտվի», և աշխատաշուկայի ճգնաժամը կշարունակվի նաև 2021 թ., իսկ ՀՆԱ-ի նախահամավարակային մակարդակին վերադառնալու համար կպահանջվի 2 և ավելի տարի:

Ռոյթերսի հետազոտության արդյունքներն ամրագրվեցին արդեն ՎԶԵԲ-ի 2020 թ. սեպտեմբեր ամսվա կանխատեսումներում[7], որոնց համաձայն՝ աշխարհի գրեթե բոլոր երկրներում (բացառությամբ՝ Ռուսաստանի և Թուրքիայի, որտեղ 2020 թ. երկու կանխատեսումները համընկել են) կանխատեսվում է իրական ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպերի ավելի մեծ անկում, քան մայիս ամսվա կանխատեսումներում ամրագրվածներն էին: Նույն աղբյուրի համաձայն՝ 2020 թ. ՀՆԱ-ի ամենափոքր անկումը, սույն համեմատության մեջ վերցված երկրներից, կգրանցվի Բելառուսում՝ 3.5%, Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում կրճատումը կկազմի 5-5.5%, Էստոնիայում՝ 4%: Ընդ որում, 2020 թ. կանխատեսվող ամենափոքր անկման պարագայում 2021 թ. Բելառուսում կանխատեսվում է ամենափոքր տնտեսական աճը՝ 1%, Հայաստանում և Էստոնիայում՝ 4%, Ուկրաինայում և Վրաստանում համապատասխանաբար 3% և 3.5%: Ըստ ՎԶԵԲ-ի՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2019 թ. մակարդակին, համեմատվող տնտեսություններից, ամենաշուտը կվերադառնա Էստոնիայում՝ 2021 թ. 4-րդ քառորդում, իսկ Հայաստանում՝ 2022 թ. 3-րդ քառորդում, Բելառուսում և Ուկրաինայում՝ 4-րդ քառորդում, Վրաստանում՝ 2-րդ քառորդում:

Ակնհայտ է, որ տնտեսությունների վերականգնումն ավելի երկարատև կլինի և նախավարակային մակարդակին կհաջողվի վերադառնալ լավագույն դեպքում 2022 թ. վերջին, ինչը նշանակում է, որ «Մեծ լոքդաունն» ավելի շուտ կունենա փչակաձև տեսք. 2021 թ. անգամ հնարավոր չի լինի հասնել 2019 թ. մակարդակին (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***ՀՆԱ-ի փոփոխությունը (%, նախորդ տարվա համեմատությամբ) 2015-2021 թթ.[8]***

Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից գլոբալ աշխատաշուկայի ցուցանիշների վերլուծության արդյունքներով՝ աշխատողների

---

[7] Տե՛ս EBRD Regional Prospects in the EBRD Regions Covid-19: Early Estimates of the Damage, uncertain prospects, September 2020.

[8] Գծապատկերը կազմել է հեղինակը. 2015-2019 թթ. տվյալները՝ ըստ Համաշխարհային բանկի, 2020-2021 թթ. տվյալները՝ ըստ ՎԶԵԲ 2020 թ. սեպտեմբեր ամսվա կանխատեսումների:

94%-ը բնակվում է աշխարհի այնպիսի երկրներում, որտեղ տեղի են ունենում աշխատատեղեր (աշխատավայրեր) փակելու տարատեսակ միջոցառումներ, նրանց 1/5-ը բնակվում է այնպիսի երկրներում, որտեղ փակվել են բոլոր աշխատատեղերը (աշխատավայրերը)՝ բացառությամբ կարևորների[9]: Աշխատանքի միջազգային կազմակերպության կանխատեսումների համաձայն՝ գլոբալ գործազրկությունը կշարունակի աճել համավարակի և՛ լավագույն, և՛ վատագույն ելքի դեպքում՝ համապատասխանաբար 5.3 և 24.7 միլիոնով՝ գլխավորապես աշխատավարձերի և աշխատաժամերի կրճատման պատճառով[10]:

Տնտեսության վրա լոքդաունի ազդեցությունների վերաբերյալ տնտեսագետների տեսակետները միանշանակ չեն: Սպառողական ծախսերի շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնիսկ համընդհանուր լոքդաուն չկիրառած երկրներում սպառողական ծախսերը նշանակալի կրճատվել են՝ պայմանավորված իրավիճակի անորոշությամբ, ռիսկի գործոնով, սպառողների սպասումներով և նրանց վարքագծի փոփոխություններով[11]:

Հետազոտության մեթոդաբանություն: Հաշվի առնելով համավարակի տարածումը կանխելու և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները չեզոքացնելու՝ երկրների կողմից կիրառվող քաղաքականությունների տարբերությունները՝ ՀՀ աշխատաշուկայի 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակի ցուցանիշները համեմատվել են Վրաստանի և Ուկրաինայի (որպես համընդհանուր լոքդաուն իրականացրած և կարանտին սահմանած տնտեսությունների), Էստոնիայի (որպես Եվրամիության անդամ, տնտեսության չափերով ՀՀ տնտեսության հետ համադրելի և լոքդաուն իրականացրած տնտեսության), Բելառուսի (որպես տեղաշարժի սահմանափակություններ չկիրառած տնտեսության) աշխատաշուկայի ցուցանիշների հետ: Հայաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի և Էստոնիայի աշխատաշուկայի ցուցանիշների փոփոխությունների, ինչպես նաև դրանց վրա նոր COVID-19 կորոնավիրուսային համավարակի ազդեցության վերլուծության և գնահատման նպատակով կիրառվել են որոնողական, նկարագրական, պատճառահետևանքային, ընդհանրացման, ինդուկցիայի և դեդուկցիայի, գենեզի հետազոտության մեթոդներ: Կիրառվել են վիճակագրական (քանակական և որակական), մաթեմատիկական (գրաֆիկական), համեմատական և կոնտենտ վերլուծությունների գործիքներ: Նշված մեթոդների և հետազոտության գործիքների համախմբությունը ներառում է տարբեր աղբյուրներից և վերլուծական նյութերից համեմատվող երկրների տնտեսություններին և աշխատաշուկաներին առնչվող վիճակագրական տվյալների վերլուծություն և համադրում: Հետազոտության ընթացքում ստացված եզրահանգումները հիմնված են տարբեր աղբյուրներից ստացված տեղեկության վրա: Առաջին հերթին, օգտագործվել են համեմատվող երկրների ազգային վիճակագրական ծառայությունների, Համաշխարհա-

---

[9] Տե՛ս ILO Monitor: COVID-19 and the World of Work. Fifth edition. Updated estimates and analysis, 30 June 2020:

[10] Տե՛ս ILO Monitor 1st edition, Covid-19 and the world of work: Impact and Policy Responses, 18 March 2020:

[11] Տե՛ս **Andersen A. L., Hansen E. T., Johannesen N., Sheridan A.,** Pandemic, Shutdown and Consumer Spending: Lessons from Scandinavian Policy Responses to COVID-19, 2020, Papers arXiv, May 2005:

յին բանկի տվյալները, ՎԶԵԲ-ի և Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները, տարբեր կենտրոնների հարցումների արդյունքները, ինչպես նաև վերոնշյալ երկրների կառավարությունների կողմից համավարակի սոցիալ-տնտեսական ազդեցությունների հաղթահարման առնչությամբ ընդունված որոշումները, օրենսդրական փոփոխությունները: Հաշվի առնելով համավարակի տարածման շարունակականությունը և հերթական վերահաս ալիքի անխուսափելիությունը՝ համադրվել են նշված երկրների տնտեսությունների վրա համավարակի ազդեցությունների և դրանց հաղթահարման հնարավորությունների վերաբերյալ տնտեսական պարբերաշրջանի իջնող ալիքի և երկրորդ՝ կարճաժամկետ բարձրացող ալիքի համատեքստում կատարված կանխատեսումները:

Վերլուծություն: Կորոնավիրուսային համավարակի տարածումը կանխելու համար որոշ երկրների կառավարությունների հայտարարած պարտադիր կարանտինի և արտակարգ դրության ընթացքում սահմանափակումներ սահմանվեցին և արգելվեցին տնտեսական գործունեության առանձին տեսակներ, որոնք էլ իրենց բացասական ազդեցությունն ունեցան երկրների ՀՆԱ-ի վրա: Այսպես, 2020 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, ՀՀ-ում և Վրաստանում տնտեսական աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 3.8 և 2.2%, մինչդեռ երկրորդ եռամսյակում ՀՆԱ-ն կրճատվել է համապատասխանաբար 13.7 և 12.3%-ով: ՀՆԱ-ի կրճատման վրա սահմանափակումների ազդեցությունն ակնառու է 2020 թ. երկրորդ եռամսյակում[12]: Համընդհանուր կարանտին սահմանած Ուկրաինայում 2020 թ. առաջին եռամսյակում ՀՆԱ-ն կրճատվել է 1.5%-ով, իսկ երկրորդում՝ 11.4%-ով՝ չնայած ապրիլի 8-ից տնտեսության աստիճանական վերաբացմանը[13]: Բելառուսում 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում, 2019 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, ՀՆԱ-ն կրճատվել է համապատասխանաբար 0.2 և 3.3%-ով, իսկ երկրորդ եռամսյակում, նախորդի համեմատությամբ, 11.5%-ով[14]: Էստոնիայում 2020 թ. առաջին եռամսյակում ՀՆԱ-ն կրճատվել է 0.7%-ով՝ 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Արտակարգ իրավիճակի և սահմանափակումների ազդեցությունը Էստոնիայի տնտեսության վրա դրսևորվել է ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ավարտին միայն. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, ՀՆԱ-ն կրճատվել է 6.9%-ով[15]:

Համավարակի տարածումը կանխելու կարանտինային և մարդկանց տեղաշարժը սահմանափակող միջոցառումները հանգեցրել են հիմնականում շինարարության, առևտրի, անշարժ գույքի գործարքների, փոխադրումների և պահեստային տնտեսության, զվարճությունների, հանրային սննդի կազմակերպման և այն ծառայությունների ոլորտների նշանակալի կրճատմանը, որոնք ուղղակի շփում են պահանջում գնորդների և վաճառողների միջև: Հա-

---

[12] https://www.armstat.am/am/?nid=12&id=01001, https://www.geostat.ge/media/33681/Gross-Domestic-Product-of-Georgia---II-Quarter%2C-2020.pdf

[13] http://www.ukrstat.gov.ua/

[14] https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/national-accounts/current-data/

[15] https://tradingeconomics.com/estonia/gdp-growth-annual

մեմատվող երկրներում տնտեսության տուժած ոլորտների համախառն թողարկումը կազմում է ՀՆԱ-ի 40-65%-ը (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***COVID-19 համավարակի ազդեցությունից տուժած ոլորտների բաժինը ՀՆԱ-ում (%) 2019 թ.***[16]

Նշենք, որ 2020 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, շինարարության ծավալը Հայաստանում կրճատվել է 12.1, իսկ երկրորդ եռամսյակում՝ 39.5%-ով[17]: Անշարժ գույքի հետ կապված գործունեության ծավալը 2020 թ. առաջին եռամսյակում աճել է 4.5%-ով, իսկ երկրորդում՝ կրճատվել 30.5%-ով: Մեծածախ և մանրածախ առևտրի ծավալը 2020 թ. առաջին եռամսյակում աճել է 1%-ով, իսկ երկրորդում՝ կրճատվել 19.1%-ով: Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը 2020 թ. առաջին եռամսյակում աճել է 9.2%-ով, իսկ երկրորդ եռամսյակում՝ կրճատվել 71.2%-ով: Փոխադրումների և պահեստային տնտեսության ծավալը 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, կրճատվել է համապատասխանաբար 8.7 և 32.9%-ով: Տրանսպորտի ծավալի կրճատումը պայմանավորված է եղել ցամաքային տրանսպորտի ծավալի կրճատմամբ, որի անկումը 2020 թ. առաջին կիսամյակում կազմել է 32.3%[18]: Վարչարարական և օժանդակ գործունեության ծավալը 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում կրճատվել է համապատասխանաբար 3.1 և 52.4%-ով: 2020 թ. առաջին կի-

[16] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ https://www.armstat.am/file/doc/99520928.pdf, https://www.geostat.ge/en/modules/categories/23/gross-domestic-product-gdp, http://www.ukrstat.gov.ua/, https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/national-accounts/current-data/gdp-and-grp/, http://andmebaas.stat.ee/Index.aspx?lang=en&DataSetCode=RAA0050# տվյալների:

[17] Այս և սույն պարբերության մյուս տվյալները տե՛ս https://www.armstat.am/am/?nid=82&id=2291:

[18] Այս և տվյալ պարբերության մյուս տվյալները՝ ըստ https://www.armstat.am/am/?nid=82&id=2280:

սամյակում այս ոլորտի անկումը կազմել է 36.4%, որից զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների գործունեության, տեղերի ամրագրման և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայությունների ծավալը կրճատվել է 77%-ով: 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ամենաքիչ անկում արձանագրած ոլորտը *մշակույթ, զվարճություններ և հանգիստն* է (համապատասխանաբար 0 և 13.7%), որի ծավալը 2020 թ. առաջին կիսամյակում աճել է 1.6%-ով: Դա պայմանավորված է եղել վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեյքերական գործունեության կազմակերպման ծավալի 20.8% աճով (նշված խմբի գործունեությունների մյուս բոլոր տեսակների ծավալները կրճատվել են 45-70%-ով): ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտի ծավալը 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում աճել է համապատասխանաբար 20.9 և 22.4%-ով, որը, կարծես, անիրական է դարձնում տնտեսական ճգնաժամի մասին մտահոգությունները[19]: Համեմատության համար նշենք, որ Էստոնիայում արդյունաբերության ոլորտը, որը կազմում է ՀՆԱ-ի 14.7%-ը, 2020 թ. երկրորդ եռամսյակում կրճատվել է 19%-ով, կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալը՝ 58%-ով: Մինչդեռ, շինարարության ոլորտը, որը կազմում է երկրի ՀՆԱ-ի 6.4%-ը, նույն ժամանակաշրջանում աճել է 12%-ով[20]: Վրաստանում ՀՆԱ-ի կրճատման վրա նշանակալի ազդեցություն է ունեցել զբոսաշրջության ոլորտի ծավալի կրճատումը. 2020 թ. հունիսին դեպի Վրաստան զբոսաշրջիկների թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, կրճատվել է 94.8%-ով, իսկ զբոսաշրջության ոլորտի եկամուտը՝ 97%-ով[21]:

Զբաղվածության վրա COVID-19-ի ազդեցության ուղիները բազմաթիվ են. մարդկային կապիտալի և աշխատուժի առաջարկի կրճատում, անորոշության և վախի աճի պատճառով սպառողական ծախսերի կրճատում, սպառողների վստահության անկում, ներդրումային վարքագծի փոփոխություն: Առկա վիճակագրական տվյալները փաստում են, որ աշխատաշուկայի և աշխատանքային ժամերի կրճատման վրա ազդող գործոնները տարբեր երկրներում տարբեր են: Որոշ երկրներում աշխատաժամերի կրճատումը և «զբաղված լինել, բայց չաշխատել» (ժամանակավոր չզբաղվածության)[22] ռազմավարությունը նշանակալիորեն նպաստել են աշխատաժամերի կրճատմանը, մինչդեռ մյուսներում աճել է գործազրկության մակարդակը, իսկ տնտեսական ակտիվության մակարդակը՝ կրճատվել: Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից գլոբալ աշխատաշուկայի ցուցանիշների վերլուծության արդյունքների համաձայն՝ 2020 թ. առաջին եռամսյակում աշխարհում աշխատաժամերի ընդհանուր կորուստը համարժեք է եղել 155 միլիոն լրիվ աշխատօրով աշխատանքների, որը երկրորդ եռամսյակում կազմել է 400 միլիոն[23]:

2020 թ. առաջին եռամսյակում, սույն հետազոտության շրջանակներում համեմատվող երկրներից, միայն Էստոնիայում է գործազրկության մակար-

---

[19] https://www.armstat.am/am/?nid=82&id=2291

[20] https://www.stat.ee/en/uudised/teise-kvartali-majanduslangus-oli-69

[21] https://gnta.ge/statistics/

[22] Հայաստանում 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում համապատասխանաբար 33.600 և 50.100 մարդ գտնվել է հարկադիր պարապուրդում, տե՛ս https://www.armstat.am/am/?nid=82&id=2307:

[23] Տե՛ս ILO Monitor: COVID-19 and the world of work. Fifth edition. Updated estimates and analysis, 30 June 2020.

դակն աճել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.3%-ային կետով: 2020 թ. երկրորդ եռամսյակում, տնտեսության լոքդաունով պայմանավորված, գործազրկության մակարդակն աճել է Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում և Էստոնիայում՝ 1.5-2%-ային կետով: Բելառուսում նշված ցուցանիշը կրճատվել է 0.2%-ային կետով (գծապատկեր 3): Բացի նրանից, որ Բելառուսը սահմանափակող միջոցառումներ չի կիրառել, սա նաև պայմանավորված է տնտեսությունում զբաղվածության կառուցվածքային առանձնահատկություններով. Բելառուսում զբաղվածների գրեթե 40%-ը պետական հատվածի աշխատողներ են, որը, կարելի է ասել, երաշխավորում է կայուն զբաղվածություն[24]: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում զբաղվածների մոտավորապես 25%-ն է զբաղված տնտեսության պետական հատվածում[25]:



Գծապատկեր 3. ***Գործազրկության մակարդակը (%) 2019 և 2020 թթ. առաջին և երկրորդ եռամսյակներում***[26]



Գծապատկեր 4. ***Գործազրկության մակարդակը (%) 2015-2021 թթ.***[27]

---

[24] https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/employment/annual-data/

[25] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ https://www.armstat.am/am/?nid=586 տվյալների:

[26] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ https://www.armstat.am/am/?nid=82&id=2307, https://www.geostat.ge/en/modules/categories/38/employment-and-unemployment, https://index.minfin.com.ua/labour/unemploy/, https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/employment/current-data/labour-force-survey/, https://www.stat.ee/en/find-statistics/statistics-theme/work-life/labour-market/unemployment-rate տվյալների:

[27] Գծապատկերը կազմել է հեղինակը. 2015-2019 թթ. տվյալները՝ ըստ ՀԲ-ի, 2020 և 2021 թթ. կանխատեսումները՝ ըստ ԱՄՀ 2020 թ. հոկտեմբեր ամսվա զեկույցի, International Monetary Fund, World Economic Outlook: A Long and Difficult Ascent, October 2020, Վրաստանի տվյալ-

ԱՄՀ կանխատեսումների համաձայն՝ 2020 թ. ՀՀ-ում գործազրկության մակարդակը 5.4%-այինկետով կգերազանցի նախորդ տարվա ցուցանիշը՝ հասնելով 22.3%-ի, իսկ 2021 թ. կկրճատվի մինչև 21.1%՝ գերազանցելով համեմատվող մյուս երկրների ցուցանիշները: Ուկրաինայում և Էստոնիայում 2020 թ. գործազրկության մակարդակը նախորդ տարվա ցուցանիշը կգերազանցի մոտավորապես 3%-այինկետով, իսկ 2021 թ. կկրճատվի համապատասխանաբար 2.6 և 1.7%-այինկետով[28] (գծապատկեր 4):

Լոքդաունի պատճառով ամենաշատ տուժած ոլորտներում զբաղվածությունը համեմատվող երկրներում տատանվում է 25-40%-ի սահմաններում: Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, զբաղվածների թիվն ամենամեծն է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում. Հայաստանում՝ ընդհանուր զբաղվածների 12.6%-ը, Վրաստանում՝ 11.7%-ը, Ուկրաինայում՝ 23.2%-ը, Բելառուսում՝ 14.5%-ը, Էստոնիայում՝ 12.8%-ը: Այս ոլորտում զբաղվածության կրճատումը նշանակալի չի եղել, քանի որ համընդհանուր լոքդաունի ընթացքում հիմնականում մանրածախ վաճառքի կենտրոնները և դեղատները բաց են եղել:



Գծապատկեր 5. ***Զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների (%), 2019 թ.***[29]

Հայտնի է, որ որքան մեծ են ոչ ֆորմալ տնտեսության չափերը, այնքան դժվար է հաղթահարել ճգնաժամի ազդեցությունը տնտեսության վրա: 1991-2015 թթ. ժամանակահատվածում Հայաստանում ոչ ֆորմալ տնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 42.6%-ը, Բելառուսում՝ 44.5%-ը, Վրաստանում՝ 64.9%-ը, Էստոնիայում՝ 23.8%-ը, Ուկրաինայում՝ 44.8%-ը[30]: Հայաստանում շարունակում է

ները բացակայում են, Բելառուսի 2020 և 2021 թթ. կանխատեսումները կատարվել են 2020 թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածի ցուցանիշների հիման վրա:

[28] Տե՛ս World Economic Outlook: A Long and Difficult Ascent, IMF October 2020:

[29] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ https://www.armstat.am/am/?nid=586, https://andmed.stat.ee/en/stat/sotsiaalelu__tooturg__heivatud__aastastatistika/TT0200, https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/employment/annual-data/, https://www.geostat.ge/en/modules/categories/38/employment-and-unemployment, http://www.ukrstat.gov.ua/ տվյալների:

[30] 1991-2015 թթ. միջին ցուցանիշն է: Տե՛ս **Medina L., Schneider F.,** Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years? IMF Working Paper, WP/18/17, January 2018, էջ 50-54:

բարձր մնալ նաև ոչ ֆորմալ զբաղվածությունը. 2019 թ. գերազանցել է ընդհանուր զբաղվածների 46%-ը[31]: Ոչ ֆորմալ աշխատողների աշխատավարձի մակարդակը ցածր է, ինչը նշանակում է, որ նրանք ունեն փոքր խնայողություններ կամ դրանք առհասարակ բացակայում են, և նրանց համար չափազանց դժվար է փոխհատուցել եկամտի կորուստը: Ըստ ՀԲ-ի՝ 2020 թ. հունիս ամսվա դրությամբ Հայաստանում աշխատատեղերի 60.3%-ը եղել է վարձատրվող, որը չափազանց ցածր ցուցանիշ է մյուս երկրների համեմատությամբ (բացառությամբ Վրաստանի՝ 49.2%), որտեղ այն գերազանցում է 80%-ը, մասնավորապես՝ Էստոնիայում՝ 89.5% է, Բելառուսում՝ 95.8%, Ուկրաինայում՝ 84.3%[32]:



Գծապատկեր 6. ***Ինքնազբաղվածների և խոցելի զբաղվածների բաժինը ընդամենը զբաղվածների թվաքանակում (%), 2019 թ.[33]***

Բացի ոչ ֆորմալ զբաղվածներից, COVID-19 ճգնաժամը վնաս է հասցրել նաև ինքնազբաղվածներին: 2019 թ. Հայաստանում ինքնազբաղվածները կազմել են ընդհանուր զբաղվածների 39.9%-ը (գծապատկեր 6): Ընդ որում, ինքնազբաղվածությունը բարձր է համավարակի արդյունքում տուժած ոլորտներում. շինարարությունում զբաղվածների 48%-ը, առևտրի ոլորտում՝ 37%-ը, տրանսպորտի ոլորտում՝ 30%-ը, այլ ծառայությունների ոլորտում՝ 33%-ը: Ավելին, Հայաստանում ինքնազբաղվածների ճնշող մեծամասնությունը միայնակ է աշխատում և աշխատող չի ունենում, ինչը նշանակում է, որ այն իրապես ձեռնարկատիրական գործունեություն համարել չի կարելի[34]: Հայտնի է, որ ինքնազբաղվածների մի մասը համավարակով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումների հետևանքով տուժած զբոսաշրջության ոլորտի սեզոնային աշխատանք կատարողներ են, որոնք եկամտի այլ աղբյուրներ հիմնականում չունեն: Տնտեսությունում գործազրկության մակարդակի աճով

[31] https://www.armstat.am/am/?nid=586
[32] https://data.worldbank.org/indicator/SL.EMP.WORK.ZS?locations=AM-BY-EE-GE-UA
[33] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ https://data.worldbank.org/indicator/SL.EMP.SELF.ZS?locations=AM-BY-EE-GE-UA, https://data.worldbank.org/indicator/SL.EMP.VULN.ZS?locations=AM-BY-EE-GE-UA տվյալների:
[34] Տե՛ս **Honorati M., Johansson de Silva S., Millan N., Kerschbaumer F.,** Work For a Better Future For Armenia: An Analysis of Job Dynamics, The World Bank, October 2019, էջ 20:

պայմանավորված՝ այլ աշխատանքի անցնելը կամ այլ երկրում աշխատանք փնտրելը նրանց համար նույնպես անհնար է դարձել:

Համեմատվող երկրներում 2019 թ. ինքնազբաղվածության ամենացածր ցուցանիշը եղել է Բելառուսում՝ ընդամենը զբաղվածների 4.2%-ը, իսկ ամենաբարձրը՝ Վրաստանում՝ 51.1%-ը: Հայաստանում ինքնազբաղվածները կազմում են զբաղվածների 39.9%-ը, իսկ խոցելի զբաղվածները[35]՝ 38.7%-ը՝ զիջելով միայն Վրաստանի ցուցանիշին:

«Մեծ լոքդաունի» բացասական ազդեցություններից անմասն չեն մնացել նաև աշխատող միգրանտները, որոնցից շատերի աշխատատեղերը փակվել են, նրանք զրկվել են տուն վերադառնալու և ընտանիքներին օգնելու հնարավորությունից: ՀՀ Կառավարության կողմից մինչև 2021 թ. հունվարի 11-ը սահմանված կարանտինի հետևանքով հայրենիք վերադարձած միգրանտ աշխատողներն այսօր չեն կարող վերադառնալ ընդունող երկրներ՝ միաժամանակ հնարավորություն չունենալով աշխատանքի անցնել հայրենիքում: Դա պատճառ է դարձել նաև մասնավոր դրամական փոխանցումների կրճատումների, որոնք 2019 թ. Հայաստանում կազմել են ՀՆԱ-ի 11.2%-ը, Վրաստանում՝ 12.7%-ը, Ուկրաինայում՝ 10.3%-ը, Բելառուսում և Էստոնիայում՝ մոտավորապես 2%-ը (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. ***Ստացված մասնավոր դրամական փոխանցումները 2015-2019 թթ. (%, ՀՆԱ)[36]***

2020 թ. առաջին եռամսյակում աշխատանքի վարձատրության տեսքով դեպի Հայաստան դրամական փոխանցումները, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, կրճատվել են 5.5%-ով՝ 6 մլն ԱՄՆ դոլարով: 2020 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա համեմատությամբ, անկումը կազմել է 65.5%՝ 127.9 մլն ԱՄՆ դոլար: 2020 թ. երկրորդ եռամսյակի կրճատումը, առաջինի համեմատությամբ, կազմել է 34.3%՝ ավելի քան 35 մլն ԱՄՆ դոլար[37]:

---

[35] ՄԱԿ-ի բնորոշմամբ՝ խոցելի զբաղվածությունն ինքնազբաղվածների և առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների ընդհանուր թիվն է: Նրանց դեպքում ֆորմալ աշխատանքն ավելի քիչ հավանական է, ուստի ավելի հավանական է համապատասխան աշխատանքային պայմանների բացակայությունը:

[36] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ https://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.DT.GD.ZS?locations=AM-BY-EE-GE-UA տվյալների:

[37] Հաշվարկը կատարել է հեղինակը՝ ըստ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx տվյալների:

COVID-19 ճգնաժամը հաղթահարելու՝ երկրների կառավարությունների կողմից իրականացվող միջոցառումների և կիրառվող գործիքների ուսումնասիրությունը փաստում է, որ դրանք հիմնված են հետևյալ 4 հենասյուների վրա. աշխատողների վրա COVID-19-ի ազդեցության մեղմում աշխատավայրում և աջակցության տրամադրում աշխատողներին հիվանդության/կարանտինում գտնվելու դեպքում, դրամական աջակցություն աշխատանքը կամ եկամուտը կորցրածներին, աջակցություն բիզնեսին՝ աշխատատեղերի և եկամուտների պահպանման համար, ուղղակի ֆինանսական աջակցություն տուժած ոլորտներին:

Կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման համար ՀՀ-ում Կառավարության կողմից ընդունվել են 25 միջոցառումներ, որոնց ընդհանուր բյուջեն 2020 թ. սեպտեմբերի 10-ի դրությամբ կազմել է 163.4 մլրդ ՀՀ դրամ (340 մլն ԱՄՆ դոլար)՝ ՀՆԱ-ի 2.5%-ը, որը 150 մլրդ ՀՀ դրամով (313 մլն ԱՄՆ դոլար) արդեն գերազանցել է աջակցության նախնական բյուջեն: Բելառուսում կառավարության կողմից 2020 թ. ապրիլին հաստատված՝ տնտեսության աջակցության բյուջեն կազմել է 1.9-2.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ-ի 3-4%-ը, Վրաստանում՝ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ-ի 7.1%-ը, Ուկրաինայում՝ 2.33 մլրդ ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ-ի 1.5%-ը[38], Էստոնիայում՝ 1.75 մլրդ (հուլիսին՝ արդեն 3.4 մլրդ) եվրո՝ ՀՆԱ-ի 4.4%-ը[39]:

Աշխատողների վրա աշխատավայրում COVID-19-ի ազդեցությունը մեղմելու և հիվանդության/կարանտինում գտնվելու դեպքում աշխատողներին աջակցություն տրամադրելու համար գրեթե բոլոր երկրներն իրականացնում են նույնօրինակ միջոցառումներ. հնարավորության դեպքում աշխատանքը կազմակերպել հեռավար՝ ստեղծելով անհրաժեշտ բոլոր պայմանները դրա լիարժեք իրականացման համար և սահմանել ճկուն աշխատանքային գրաֆիկներ, անկախ բնականոն աշխատանքային գրաֆիկին վերադառնալու հանգամանքից՝ ռիսկային խմբում գտնվող աշխատողներին հնարավորություն տալ աշխատանքն իրականացնելու հեռավար: Երկրների մեծ մասը կորոնավիրուսով հիվանդության և/կամ կարանտինում գտնվելու ընթացքում աշխատողին և/կամ ինքնազբաղվածին ժամանակավոր անաշխատունակության նպաստ է տրամադրում[40]: Օրինակ, Էստոնիայում հիվանդության/կարանտինում գտնվելու դեպքում հիվանդության 4-րդ օրվանից մինչև 8-րդ օրը աշխատողին վճարում է գործատուն, 9-րդ օրվանից սկսած՝ վճարում է պետությունը, սակայն ոչ ավելի, քան 7 օր՝ պարտավորվելով փոխհատուցել նաև առաջին 3 օրերի նպաստը մինչև արտակարգ դրության ավարտը[41]:

Համավարակի պատճառով աշխատանքը կամ եկամուտը կորցրած վարձու աշխատողներին և/կամ ինքնազբաղվածներին աջակցելու համար դիտարկված բոլոր երկրներում սահմանվել է գործազուրկներին աջակցության նպաստ: ՀՀ-ում կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման 6-րդ միջոցառմամբ աշխատանքը կորցրած յուրաքանչյուր անհատի պետու-

---

[38] Տե՛ս COVID-19 Crisis Response in Eastern Partner Countries, OECD October 2020.

[39] https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_559

[40] COVID-19 վիրուսային հիվանդությամբ հիվանդանալու դեպքում աշխատողը դիտարկվում է որպես անաշխատունակ՝ աշխատանքային պատահարի արդյունքում և ստանում է հիվանդության արձակուրդ:

[41] https://www.terviseamet.ee/en/covid19

թյունը տրամադրել է միանվագ 68.000 դրամ՝ մոտավորապես 140 ԱՄՆ դոլար, որը կազմել է 2020 թ. առաջին եռամսյակի միջին աշխատավարձի 35.8%-ը, նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքի 130.6%-ը[42]: Միջոցառման բյուջեն կազմել է 475 մլն ՀՀ դրամ և շահառու է դարձել 6723 անհատ[43]: Համեմատության համար նշենք, որ Վրաստանում աշխատանքը կորցրած յուրաքանչյուր անհատի ամսական 200 լարի է տրամադրվել (շուրջ 63 ԱՄՆ դոլար) 6 ամիս շարունակ, որը հավասար է եղել 2020 թ. առաջին եռամսյակի միջին աշխատավարձի 17%-ին: Ուկրաինայում գործազրկության նպաստ է սահմանվել 38 ԱՄՆ դոլարի չափով, որը կազմել է 2020 թ. առաջին եռամսյակի միջին աշխատավարձի ընդամենը 9.3%-ը և նվազագույն սպառողական զամբյուղի 50.6%-ը: Էստոնիան աշխատանքը կորցրած յուրաքանչյուր անհատի երկու ամիս տրամադրել է ամսական 1000 եվրո նպաստ, որը կազմել է 2020 թ. առաջին եռամսյակի միջին աշխատավարձի 86.4%-ը:

Տուժած ոլորտների զբաղվածներին կամ ինքնազբաղվածներին աջակցելու 20-րդ միջոցառմամբ ՀՀ Կառավարությունը նախատեսել է 2.5 մլրդ ՀՀ դրամ բաշխել 36.800 շահառուների[44]:

Բիզնեսի իրացվելիության խնդիրները լուծելու համար երկրները առանձին արտոնյալ վարկային փաթեթներ են մշակել միկրոձեռնարկությունների, ՓՄՁ-ների և խոշոր բիզնեսի համար և գործարկել են վարկային երաշխավորությունների պետական հիմնադրամներ: ՀՀ Կառավարությունը նպատակային վարկերի համաֆինանսավորման, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով աջակցություն է տրամադրել կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ աշխատակիցներին աշխատավարձ վճարելու կամ դրան հավասարեցված վճարումներ, ինչպես նաև առավելագույնը երեք ամսվա հարկային կամ այլ պարտադիր վճարումներ կատարելու, հումք կամ նոր սարքավորումներ ձեռք բերելու, հանրային ծառայությունների վճարումներ կատարելու համար, իրականացնում է նաև գյուղատնտեսության ոլորտի նպատակային վարկերի համաֆինանսավորում և տոկոսադրույքի սուբսիդավորում[45]: ՀՀ-ում առանձնահատուկ է «Զրոյից բիզնես ստեղծելու» ձգտում ունեցող շահառուներին արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրման եղանակով ֆինանսական միջոցների հատկացումը[46]:

Աշխարհի երկրների մեծամասնությունը լրացուցիչ դրամական աջակցություն է տրամադրել համավարակի պատճառով ծագած ճգնաժամից տուժած ընկերություններին՝ հիմնականում դրամաշնորհների տեսքով: ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող դրամաշնորհները հիմնականում ուղղված են արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցությանը: Այս նպատակին են ուղղված եղել Հայաստանում կորոնավիրուսի տնտեսական հետևանք-

---

[42] Այս և մյուս երկրներին առնչվող համանման ցուցանիշների հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ երկրների պաշտոնական վիճակագրությունների:

[43] https://www.petekamutner.am/covidNews.aspx?sid=srcroot

[44] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/06/18/Cabinet-meeting/

[45] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140966

[46] Տե՛ս ՀՀ-ում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140968:

ների չեզոքացման 5-րդ, 10-րդ, 18-րդ և 21-րդ միջոցառումները, որոնց շահառուների թիվը 43.911 է, իսկ համախառն բյուջեն՝ 7.2 մլրդ ՀՀ դրամ[47]:

ՀՀ-ում զբոսաշրջության և խաղողի վերամշակման ոլորտներին աջակցելու համար Կառավարությունն ընդունել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ և 24-րդ միջոցառումները: Առաջինի համաձայն՝ նախատեսվում է ամսական դրամաշնորհի տրամադրում զբոսաշրջության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին: Ծրագրի շահառու հանդիսանալու ժամանակահատվածն ընդգրկում է 2020 թ. հուլիսից մինչև 2021 թ. մարտ ամիսը ներառյալ, և այս միջոցառման շրջանակներում տեղաբաշխվելու է 6 մլրդ ՀՀ դրամ: Երկրորդի համաձայն՝ խաղողի մեծածավալ մթերումներ իրականացնող տնտեսավարողներին նպատակային վարկեր կտրամադրվեն, մասնավորապես՝ հետևյալ պայմաններով՝ ՀՀ դրամով, մինչև 14% տոկոսադրույքով, իսկ արտարժույթով՝ մինչև 9% տոկոսադրույքով, որոնք ամբողջությամբ կսուբսիդավորվեն[48]: Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 25-րդ միջոցառման համաձայն՝ զբոսաշրջության ոլորտը սպասարկող տրանսպորտային ընկերությունները մինչև 2021 թ. մարտ ամիսը ներառյալ, յուրաքանչյուր եռամսյակի համար, կարող են ստանալ փոխհատուցում վարկի դիմաց վճարման ենթակա տոկոսների 75%-ի չափով[49]:

Տնտեսության և բիզնեսի վրա ուղղակի և անուղղակի ազդեցության ամենաակտիվ գործիքներից են համարվում հարկային միջոցառումները և պետական երաշխավորությամբ վարկերը: Հարկային արձակուրդները, որոնք որոշ երկրներ սկսել են կիրառել հակաճգնաժամային միջոցառումների նախնական փուլում, նպատակ ունեն թույլ չտալ բիզնեսի համար կանխիկ միջոցների պակասուրդի ձևավորումը: Օրինակ, Բելառուսում մինչև 2020 թ. հոկտեմբեր ամիսը 47.000 ֆիրմաներ և անհատ ձեռնարկատերեր 13 մլն ԱՄՆ դոլարի հարկային արտոնություն են ստացել, 50-ից ավելի ընկերություններ ստացել են 267 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ պետական երաշխավորությամբ[50]: Վրաստանում բիզնեսին և անհատներին աջակցելու համար ԿԲ-ն վարկերի գծով վճարումները հետաձգել է մինչև 3 ամսով, կրկնապատկել ԱԱՀ-ի վերադարձը մինչև 374.4 մլն ԱՄՆ դոլարի չափով, մեծացրել վարկային երաշխիքները 102 մլն ԱՄՆ դոլարով՝ 90% երաշխիք տրամադրելով նոր վարկերի համար: Ուկրաինայում մինչև 2020 թ. մայիս ամսվա ավարտը փոքր և միջին բիզնեսի համար սահմանվել է վարկային արձակուրդ, իսկ սեպտեմբերին զբոսաշրջության, մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտների ԱԱՀ-ն կրճատվել է մինչև 7%:

Եզրակացություններ: Ակնհայտ է, որ միջնաժամկետում COVID-19 ճգնաժամի անհամաչափ ազդեցությունը տնտեսությունների վրա ավելի շատ պայմանավորված է տնտեսությունների կառուցվածքային և ինստիտուցիոնալ տարբերություններով, սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկություններով և կայացածությամբ, աշխատաշուկայի կարգավորման

---

[47] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների:

[48] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/08/13/Cabinet-meeting/

[49] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/09/1549_1.pdf

[50] Այս և սույն պարբերության մյուս տվյալները տե՛ս COVID-19 Crisis Response in Eastern Partner Countries, OECD October 2020:

քաղաքականության առանձնահատկություններով, քան պարտադիր տնտեսական սահմանափակումներով:

Ավելին, լոքդաուն կիրառած և չկիրառած երկրների տնտեսությունների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տնտեսական անկման պատճառը միայն տնտեսության լոքդաուն պարտադրող կառավարությունը չէ, այլև վարակի ռիսկերով պայմանավորված՝ մարդկանց վարքագծի փոփոխությունը: Օրինակ, 2020 թ. հունվար-մարտ ամիսներին, 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ՀՀ-ում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 2.7%-ով, իսկ երկրորդ եռամսյակում կրճատվել են 18.1%-ով: 2020 թ. երկրորդ եռամսյակում, առաջինի համեմատությամբ, կրճատումը կազմել է 7.4%[51]: Երևանում ապրիլ ամսին պարենամթերքի խանութներ և դեղատներ այցելությունները կրճատվել են 60, իսկ աշխատավայրեր այցելությունները՝ 70%-ով[52]: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Բելառուսում, որտեղ չնայած կառավարությունը պարտադիր սահմանափակող միջոցառումներ չի կիրառել, այնուամենայնիվ, 2020 թ. երկրորդ եռամսյակի սկզբին պարենամթերքի խանութներ և դեղատներ այցելությունների թիվը կրճատվել է 30%-ով, իսկ աշխատավայրեր այցելություններինը՝ 20%-ով[53]: Նույն ժամանակահատվածում, նախորդի համեմատությամբ, Բելառուսում տնային տնտեսությունների սպառողական ծախսերը կրճատվել են 4.2%-ով[54]: Ընդ որում, Բելառուսում 2020 թ. մարտ ամսին սպառողական գների ինդեքսը, նախորդ ամսվա համեմատությամբ, աճել է ընդամենը 1.1%-ով, իսկ ապրիլին՝ 0.4%-ով[55]: Բնակչության իրական տնօրինվող եկամուտը 2020 թ. առաջին եռամսյակում աճել է 7.1%-ով, իսկ առաջին կիսամյակի ընթացքում՝ 5.4%-ով[56]: Սա թույլ է տալիս պնդել, որ բնակչության սպառողական ծախսերի կրճատումն ավելի շատ պայմանավորված է եղել մարդկանց վարքագծի փոփոխությամբ, որի մասին վկայում է նաև Բելառուսում 2020 թ. երկրորդ եռամսյակում սպառողների վստահության ինդեքսի անկումը 6 կետով (67-ից դարձել է 61)[57]:

Գրեթե ամբողջ աշխարհում տնտեսության լոքդաունն ամենամեծ ազդեցությունը թողել է ցածր որակավորում ունեցողների, ինքնազբաղվածների, ժամանակավոր աշխատողների, փոքր ընկերություններում աշխատողների և ցածր աշխատավարձով աշխատողների վրա, ինչը նշանակում է, որ բնակչության եկամուտների անհավասարաչափ բաշխման աստիճանը մեծացել է: Ակնհայտ է, որ սահմանափակումներն ամենամեծ վնասը հասցրել են աշխատողների հենց այս խմբին, քանի որ նրանք կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք հնարավոր չէ հեռավար կազմակերպել:

Իրականում, տնտեսության ոչ ֆորմալ հատվածը տնտեսական շոկերի ժամանակ բուֆերի դեր է կատարում, սակայն ոչ COVID-19 ճգնաժամի պայ-

---

[51] https://www.armstat.am/file/article/sv_07_20a_112.pdf

[52] Տե՛ս Yandex Mobility Index 2020:

[53] Տե՛ս Covid–19 Google Global Mobility Report:

[54] https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/national-accounts/current-data/

[55] https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/prices/

[56] https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/income-and-consumption/money-income/

[57] https://www.theglobaleconomy.com/Belarus/consumer_confidence_survey/

մաններում, քանի որ աշխատանքը շարունակելու դեպքում ոչ ֆորմալ աշխատողների շրջանում առաջանում է վարակվելու վտանգ: Ոչ ֆորմալ զբաղվածներին պետական աջակցություն տրամադրելը պետության համար բարդ խնդիր է: Պետությունն այս աշխատողների համար գոնե պետք է ապահովի առողջապահական ծառայությունների նկատմամբ բավարար հասանելիություն, կոմունալ վճարների փոխհատուցում, աշխատավայրում վարակի տարածումը կանխարգելող միջոցառումների համար նախատեսված ծախսերի փոխհատուցում, քանի որ նրանք, ունակ չլինելով աշխատանքն իրականացնել հեռավար, շարունակում են գտնվել աշխատավայրում:

Ակնհայտ է, որ COVID համավարակի նոր ալիքը, որն իր տարածման մասշտաբներով ակնհայտորեն պատրաստվում է գերազանցել նախորդին, կասկածի տակ է դնում ինչպես պետությունների կողմից կիրառվող հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությունը, այնպես էլ ճգնաճամի հետևանքների հաղթահարման մասին կանխատեսումները: Ուստի, հստակ կանխատեսումներն ու ընթացիկ իրավիճակից դուրս գալու ելքերը վաղն արդեն կորցնելու են իրենց արդիականությունը:

Օգտագործված գրականություն

1. Andersen A. L., Hansen E. T., Johannesen, N., & Sheridan, A. (2020). Pandemic, Shutdown and Consumer Spending: Lessons from Scandinavian Policy Responses to COVID-19. Papers arXiv, May 2005.
2. Honorati M., Johansson de Silva S., Millan N., Kerschbaumer F., Work For a Better Future For Armenia: An Analysis of Job Dynamics, The World Bank, October 2019.
3. Medina L., Schneider F., Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years? IMF Working Paper, WP/18/17, January 2018.
4. Sheiner L., Yilla K., The ABCs of the Post-COVID Economic Recovery, Hutchins Center on Fiscal and Monetary Policy, May 4, 2020.
5. COVID-19 Crisis Response in Eastern Partner Countries, OECD October 2020.
6. Covid-19 Google Global Mobility Report.
7. EBRD Regional Economic Prospects. Covid-19: From Shock to Recovery, May 2020.
8. EBRD Regional Prospects in the EBRD Regions. Covid-19: Early Estimates of the Damage, Uncertain Prospects, September 2020.
9. ILO Monitor 1st edition, Covid-19 and the world of work: Impact and Policy Responses, 18 March 2020.
10. ILO Monitor: COVID-19 and the world of work. Fifth edition. Updated estimates and analysis, 30 June 2020.
11. International Monetary Fund, World Economic Outlook: A Long and Difficult Ascent, October 2020.
12. Yandex Mobility Index 2020.
13. http://www.ukrstat.gov.ua/
14. https://andmed.stat.ee/en/stat/sotsiaalelu__tooturg__heivatud__aastastatistika/TT020

15. https://conference-board.org/topics/natural-disasters-pandemics/CEOs-around-the-Globe-Not-Optimistic-about-Speed-of-Recovery
16. https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_559
17. https://gnta.ge/statistics/
18. https://index.minfin.com.ua/labour/unemploy/
19. https://uk.reuters.com/article/uk-eurozone-economy-poll/euro-zone-economic-outlook-steady-but-job-recovery-at-high-risk-reuters-poll-idUKKCN25G005?il=0
20. http://andmebaas.stat.ee/Index.aspx?lang=en&DataSetCode=RAA0050#
21. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140966
22. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140968
23. https://www.armstat.am/am/?nid=12&id=01001
24. https://www.armstat.am/am/?nid=586
25. https://www.armstat.am/am/?nid=82&id=2280
26. https://www.armstat.am/am/?nid=82&id=2291
27. https://www.armstat.am/am/?nid=82&id=2307
28. https://www.armstat.am/file/article/sv_07_20a_112.pdf
29. https://www.armstat.am/file/doc/99520928.pdf
30. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/employment/annual-data/
31. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/employment/current-data/labour-force-survey/
32. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/Demographic-and-social-statistics/income-and-consumption/money-income/
33. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/national-accounts/current-data/
34. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/prices/
35. https://www.belstat.gov.by/en/ofitsialnaya-statistika/real-sector-of-the-economy/national-accounts/current-data/gdp-and-grp/
36. https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
37. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/09/1549_1.pdf
38. https://www.geostat.ge/en/modules/categories/38/employment-and-unemployment
39. https://www.geostat.ge/media/33681/Gross-Domestic-Product-of-Georgia---II-Quarter%2C-2020.pdf
40. https://www.geostat.ge/en/modules/categories/23/gross-domestic-product-gdp
41. https://www.petekamutner.am/covidNews.aspx?sid=srcroot
42. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/06/18/Cabinet-meeting/
43. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/08/13/Cabinet-meeting/
44. https://www.stat.ee/en/find-statistics/statistics-theme/work-life/labour-market/unemployment-rate
45. https://www.stat.ee/en/uudised/teise-kvartali-majanduslangus-oli-69
46. https://tradingeconomics.com/estonia/gdp-growth-annual
47. https://www.terviseamet.ee/en/covid19

48. https://www.theglobaleconomy.com/Belarus/consumer_confidence_survey/
49. https://www.weforum.org/agenda/2020/06/imf-lockdown-recession-covid19-coronavirus-economics-recession/
50. https://www.weforum.org/agenda/2020/09/covid19-recovery-shape-economy-ceo/
51. https://data.worldbank.org/indicator/SL.EMP.SELF.ZS?locations=AM-BY-EE-GE-UA
52. https://data.worldbank.org/indicator/SL.EMP.VULN.ZS?locations=AM-BY-EE-GE-UA
53. https://data.worldbank.org/indicator/SL.EMP.WORK.ZS?locations=AM-BY-EE-GE-UA
54. https://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.DT.GD.ZS?locations=AM-BY-EE-GE-UA

ТАТЕВИК МКРТЧЯН
Ассистент кафедры экономической теории АГЭУ,
кандидат экономических наук

На пути к преодолению «Большого локдауна»: активизация или новый спад?» - Статья посвящена сравнительному анализу влияния нового коронавируса COVID-19 на экономику Армении, Беларуси, Украины, Грузии и Эстонии, особенно на рынок труда. В целях предотвращения распространения пандемии во многих странах мира был введен обязательный карантин и ограничения на отдельные виды экономической деятельности, в результате чего кризис здравоохранения сопровождался замедлением экономического роста, значительным сокращением в различных секторах экономики, ростом безработицы. Чтобы смягчить эти эффекты, правительства приняли ряд мер для оказания финансовой поддержки работников, находящихся в карантине или в отпуске по болезни, лиц, потерявших работу или доходы, предприятий для сохранения эффективных рабочих мест и пострадавших секторов. Они в какой-то мере сдержали спад, даже обеспечили определенную активизацию, но очевидно, что для возвращения к допандемическому уровню от экономики ряда правительств потребуется более 2 лет, в случае, если вторая волна пандемии будет более “благосклонной”.

Ключевые слова: *“Большой локдаун”, пандемия COVID-19, кризис, снижение занятости, пострадавшие секторы.*
JEL: E24, J11

TATEVIK MKRTCHYAN
Assistant Professor at the Chair of Theory of Economics at ASUE,
PhD in Economics

On the Way to "The Great Lockdown": Recovery or a New Downturn?– The paper is devoted to the comparative analysis of effects of the new COVID-19 coronavirus pandemic on the economies, especially on the labor markets of Armenia, Belarus, Ukraine, Georgia and Estonia. In order to prevent the spread of the pandemic, many countries of the world adopted mandatory quarantine and restrictions on certain types of economic activities. As a result, the health crisis was accompanied by a slowdown in economic growth, significant reduction in various sectors of the economy, increase in unemployment. To mitigate these effects, governments implemented a variety of measures to support quarantined or sick leave workers, those who have lost their jobs or incomes, businesses to preserve effective jobs and affected sectors. They have somewhat curbed the decline, even provided some recovery, but obviously it will take economies more than 2 years to return to the pre-pandemic level, in case if the second wave of the pandemic is more "favorable."

Key words: *"The Great lockdown", COVID-19 pandemic, crisis, employment decline, affected sectors.*
JEL: E24, J11